— Նա կը կորչի, — ասում էր ինձ մեր առաջնորդը նրա բացակայութեան ժամանակ:

— Ինչո՞ւ, — հարցրի ես:

— Այնտեղ ջիններ (դեւեր) են բնակւում. այնտեղ գնացող ադամորդին այլեւս չէ վերադառնում:

Դուրս գալով այրից, մենք սկսեցինք դիմել դէպի լեռան գագաթը: Այնտեղ մեր առաջնորդը կամենում էր ցոյց տալ մեզ Չարխի-ֆալակի մուտքը: Դա նոյնպիսի մի անցք էր, որպիսիները տեսել էինք մենք, եւ ուղիղ լեռան գագաթից իջնում էր դէպի նրա խորքերը: Վանէցի հայերի աւանդութիւնը այդ անցքի մասին շատ հրաշալիքներ է պատմում, որոնցից մէկը պատմեց մեզ մեր առաջնորդը: Ահա նրա խօսքերը. անցքը իջնում է մինչեւ Գայլ գետի ափերը, որը հոսում է լեռան ստորերկրայքում: Գետի սքանչելի եզերքը զարդարած են արմաւենի ծառերով: Այնտեղ Բախտը արագ ձեռքով պտտեցնում է աշխարհի անիւը՝ Չարխի-ֆալակը: Անիւի իւրաքանչիւր թեւքի վրայ Բախտը փորագրել է մի-մի գրութիւն: Այդ գրութիւնների իւրաքանչիւրը բովանդակում է իր մէջ մի գաղտնիք: Օրինակ, մէկը ցոյց է տալիս, թեւ ինչպէս պէտք է գտնել թաքուցած գանձերը. միւսը սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է պատրաստել էլեքսիրը, որի միաւորութեամբ ամէն մետաղ ոսկի է դառնում. երրորդը ցոյց է տալիս, թէ որտեղ են գտնւում գոհարների լեռները, չորրորդը ուսուցանում է, թէ որպէ՛ս բժշկութեան մէջ պէտք է գտնել անմահութեան կաթիլը, հինգերորդը տալիս է իշխանութիւն, թագաւորութիւն, փառք, մի խօսքով, անիւի իւրաքանչիւր թեւքի վրայ արձանագրուած է մի-մի թիլիսման մարդկային բախտաւորութեան համար, որոնց դեռ մարդու հանճարը չէ հասել: Անիւը առանց կանգ առնելու անդադար պտտւում է: Նա կանգ է առնում տարոայ մէջ մի անգամ միայն, այն եւս մէկ րոպէով: Այդ լինում է Համբարձման գիշերը, երբ երկինք ու գետինք գրկախառնւում են եւ համբուրւում են միմեանց հետ: Մարդիկ սպասում են հէնց այդ րոպէին: Երբ յաջողւում է նրանց հասնել մինչեւ Չարխի-ֆալակը, նրանք պէտք է ձեռքում պատրաստ ունենան մոմից շինած թերթեր, որ անիւը կանգնելու րոպէում իսկոյն կպցնեն նրա թեւքի վրայ: Խորհրդաւոր թիլիսմաններից մէկը դրոշմւում է մոմի վրայ, եւ մարդը ստանում է այն շնորհներից մէկը, որ Բախտը վիճակում է նրան: Բայց այդ շնորհներին խիստ հազիւ անգամ հասնում են մարդիկ, որովհետեւ նոյն րոպէում, երբ անիւը կանգ է առնում, նրանց տիրում է խորին թմրութիւն, նրանք քնում են, եւ անողոք անիւը դարձեալ շարունակում է իր արագ պտոյտը...